| AMERIABANK | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | 11RBD PL 72-03-02 |
|---|---|---|
| ԲԻԶՆԵՍԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ | | Խմբագրություն 48 |
| | | Ուժի մեջ է՝ 01.11.2021թ-ից |

## 1. Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վարկատեսակ | Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկ | | |
| | Նպատակ [1] | Բիզնեսի ընդլայնում, ընթացիկ գործունեության ֆինանսավորում և այլ ներդրումներ, ինչպես նաև այլ բանկերում և վարկային կազմակերպություններում գործող բիզնես վարկերի տեղափոխում Ամերիաբանկ ՓԲԸ | | |
| | Հաճախորդներ | Առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած իրավաբանական անձիք/անհատ ձեռնարկատերեր | | |
| | Ոլորտային սահմանափակումներ | Չֆինանսավորվող ոլորտների ցանկ | | |
| | Վճարունակության գնահատում [2] | Ըստ սահմանված ցուցանիշների | | |
| Վարկի պայմաններ | Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ | 3մլն-150 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ | | |
| | Արժույթ | **ՀՀ դրամ** | **ԱՄՆ դոլար** | **Եվրո** |
| | Ժամկետ (ամիս) | **12-36 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| | Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք [3] | 12.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 14.1-21.9%) | 9.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 10.7-18.2%) | 8.0%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 8.6-16.5%) |
| | Ժամկետ (ամիս) | **37-60 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| | Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք [3] | 13.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 14.9-17.4%) | 10.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.5-13.9%) | 9.0%<br>(փաստացի տոկոսադրույք 9.9-12.2% ) |
| | Ճշգրտվող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 13-րդ ամսվանից) ստանդարտ տարեկան տոկոսադրույք [3] | Հաստատուն բաղադրիչ՝ 5.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 12.6-15.1%) | Հաստատուն բաղադրիչ՝ 8.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 10.4-12.8%) | Հաստատուն բաղադրիչ՝ 7% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 8.2-10.6%) |
| | Ժամկետ (ամիս) | **61-120 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) (բացառությամբ շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակի)** | | |
| | Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք [3] | Կիրառելի չէ | 11.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 12.4-14%) | 10.0%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 10.7-12.3%) |
| | Ճշգրտվող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից) ստանդարտ տարեկան տոկոսադրույք [3] | Հաստատուն բաղադրիչ՝ 6.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 13.5-15.2%) | Հաստատուն բաղադրիչ՝ 9.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.3-12.9%) | Հաստատուն բաղադրիչ՝ 8% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 9.1-10.6%) |
| | **Բիզնես հիփոթեք** | | | |
| | Ժամկետ (ամիս) | **6-60 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| | Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 12.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 13.3-15.4%) | 10.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.1-13.4%) | 8.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 8.9-10.8%) |
| | Ժամկետ (ամիս) | **61-240 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| | Ճշգրտվող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից) ստանդարտ տարեկան տոկոսադրույք | Հաստատուն բաղադրիչ՝ 6.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 13.3-15.4%) | Հաստատուն բաղադրիչ՝ 9.0% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.0-13.4%) | Հաստատուն բաղադրիչ՝ 8% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 8.8-10.7%) |

| | | | |
|---|---|---|---|
| Նվազագույն կանխավճար | Ձեռք բերվող գույքի գնահատված շուկայական արժեքի առնվազն 5%-ի չափով:<br><br>Ձեռքբերվող գույքը իրավաբանական անձի կամ ԱՁ-ի անվամբ գրանցելու դեպքում իրականացնել 5% հավելյալ կանխավճար, կամ ներկայացնել լրացուցիչ գրավ, որի պարագայում վարկ/գրավ հարաբերակցությունը չի գերազանցի 90%-ը: | | |
| **ԳՀՀ ՓՄՁ-ների աջակցման ծրագրի ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| Ժամկետ (ամիս) | **6-60 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 9.5%-10.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 9.9-12.4%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| Ժամկետ (ամիս) | **61-120 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) (բացառությամբ շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակի)** | | |
| Ճշգրտվող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 61-րդ ամսվանից) ստանդարտ տարեկան տոկոսադրույք | Հաստատուն բաղադրիչ՝ 4.5% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)<br>(փաստացի տոկոսադրույք՝ 11.6-12.4%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **Արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| | 6-120 ամիս (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| Հետվճար (cashback) պարունակող աղբյուրներով ֆինանսավորման դեպքում հաստատուն տոկոսադրույք | 13%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 13.9-17.5%) | 9% (փաստացի տոկոսադրույք՝ 9.5-12.9%) | 7% (փաստացի տոկոսադրույք՝ 7.3-10.7%) |
| Ներքին ռեսուրսի հաստատուն տոկոսադրույք | 12% (փաստացի տոկոսադրույք՝ 12.8-16.3%) | 8%(փաստացի տոկոսադրույք՝ 8.4-11.8%) | 7% (փաստացի տոկոսադրույք՝ 7.3-10.7%) |
| ԳՀՀ "Վերականգնվող էներգիայի զարգացում" ծրագրի հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 8.5%-9.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 8.5-10.0%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **ԳՀՀ Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար ծրագրի ստանդարտ տարեկան տոկոսադրույք** [4] | | | |
| Ժամկետ (ամիս) | **6-84 (1-6 ամիս արտոնյալ ժամանակահատվածով)** | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 8.5%-10.0%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 9.0-10.75%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **ԳՀՀ ՓՄՁ-ների վարկավորում (զբոսաշրջության, գյուղատնտեսության, գյուղ վերամշակման, արտահանում խթանող և արդյունաբերության ոլորտներում) ծրագրի ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| | 6-90 ամիս (1-30 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| | 9.0%-9.5%<br>(փաստացի տոկոսադրույք՝ 9.0-9.5%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի /ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/ ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| Ժամկետ (ամիս) | 6-12 ամիս (2-3 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 12.0%-13.0% /ամբողջական սուբսիդավորման հնարավորությամբ/<br>(փաստացի տոկոսադրույք՝ 12.6-14%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **Խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար տրամադրվող վարկերի /ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/ ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| Ժամկետ (ամիս) | 61-96 ամիս (60 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 12%-13.0% /ամբողջական սուբսիդավորման հնարավորությամբ/<br>(փաստացի տոկոսադրույք՝ 12.7-14%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |

| | | | |
|---|---|---|---|
| **Տավարաբուծության զարգացման նպատակով տոհմային ԽԵԿ-երի ձեռքբերման համար տրամադրվող վարկերի<br>/ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/ ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| Ժամկետ (ամիս) | 6-60 ամիս (12 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 12%-13.0% /ամբողջական սուբսիդավորման հնարավորությամբ/<br>(փաստացի տոկոսադրույք` 12.6-14%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| **Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով տրամադրվող վարկերի<br>/ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/ ստանդարտ տարեկան տոկոսադրույք** | | | |
| Ժամկետ (ամիս) | 6-48 ամիս (12 ամիս արտոնյալ ժամանակահատվածով) | | |
| Հաստատուն տոկոսադրույքով ստանդարտ տարեկան տոկոսադրույք | 12%-13.0% /ամբողջական սուբսիդավորման հնարավորությամբ/<br>(փաստացի տոկոսադրույք` 12.6-14%) | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| Այլ ծրագրային ռեսուրսներով [3] տրամադրվող վարկեր [5] | 8.5%-15.0%<br>(փաստացի տոկոսադրույք` 8.9%-21.4%) | 5.5%-12.0%<br>(փաստացի տոկոսադրույք` 5.6%-17.7%) | 4.0%-11.0%<br>(փաստացի տոկոսադրույք` 4.1%-16.5%) |
| Տոկոսադրույքի հետ կապված այլ պայմաններ | Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է.<br>- վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում`գործող դրամական միջոցի/պարտատոմսի տոկոսադրույք + 4%, բայց ոչ ավելի քան վերոնշյալ տոկոսադրույքները,<br>-վարկի և գրավի տարբեր արժույթով լինելու դեպքում` վերոնշյալ տոկոսադրույքները: | | |
| | Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը համամասնորեն` յուրաքանչյուր գրավի առարկայի ընդհանուր գրավի արժեքում ունեցած իր տեսակարար կշռին համապատասխան, ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադիրների չափով`<br>• Ավտոտրասպորտային միջոց 2.5%<br>• Հիմնական միջոց 0.5%<br>- Արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում էլեկտրակայանի/ջրատաքացման համակարգերի ապահովագրության գծով ծախսերը ներառված են վարկի տոկոսադրույքի մեջ:<br>Անշարժ գույքի ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը նվազեցվում է 0.05%` հաշվի առնելով ընդհանուր գրավային ապահովման մեջ յուրաքանչյուր գույքի տեսակի տեսակարար կշիռը: | | |
| | Սույն պայմաններով սահմանված ապահովվածության (վարկ/գրավ) ցուցանիշի շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%: | | |
| | Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված վճարունակության չափանիշներից (ՊՍԳ ցուցանիշի) շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.25%: | | |
| | Այլ շեղումների դեպքում տոկոսադրույքը կարող է սահմանվել +0.25%: | | |
| | Վարկի մարումների դիֆերենցված և խառը եղանակն ընտրելիս տոկոսադրույքը սահմանվում է +0.5%: | | |
| | Հաճախորդի կողմից առանց վարկի վաղաժամկետ մարման վճարի տարբերակ նախընտրելիս վարկի տոկոսադրույքը սահմանվում է +2%: | | |
| Վարկի տրամադրման վճար | 1% վարկի գումարից<br>• Չի տարածվում "Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի, "Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար" տրամադրվող վարկերի, "Տոհմային ԽԵԿ-երի ձեռքբերման համար" տրամադրվող վարկերի, "Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով" տրամադրվող վարկերի, Բիզնես հիփոթեքի և Ամերիաբանկում դրամական միջոցների և/կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով ապահովված վարկերի վրա:<br>• Արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման և ԳՀՀ Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար ծրագրի դեպքում վարկի գումարի 0,5-1%, առավելագույնը` 500,000 ՀՀ դրամ<br>• ԳՀՀ ՓՄՁ-ների վարկավորում (զբոսաշրջության, գյուղատնտեսության, գյուղ վերամշակման, արտահանում խթանող և արդյունաբերության ոլորտներում) ծրագրի ներքո ֆինանսավորման դեպքում 0-1% | | |
| Վարկի գումարի կանխիկացում | Չի կիրառվում վարկառուի հաշվից | | |
| | Բիզնես հիփոթեքի և Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում դրանց շրջանակներում անշարժ գույքի կամ գյուղատնտեսական ապրանքի ձեռքբերման նպատակով վաճառողի` "Ամերիաբանկ" ՓԲԸ-ում սպասարկվող բանկային հաշվին փոխանցվող գումարի կանխիկացման համար հաշվից կախնիկացման վճար չի սահմանվում | | |

| | | |
|---|---|---|
| Վարկի մարման եղանակներ | Մարման եղանակ | Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ): |
| | | Դիֆերենցված /Նվազող/<br>(վարկի գումարը վճարվում է հավասարաչափ, տոկոսագումարը նվազում է՝ հաշվարկվելով մնացորդի նկատմամբ, վարկի գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամսական պարբերականությամբ) |
| | | Խառը<br>(հաճախորդը հնարավորություն ունի ընտրել մարումների նախընտրելի ժամանակացույց, որի հիմքում ընկած կլինի բիզնեսի ֆինանսական հոսքերի դինամիկան, սակայն<br>1 տարվա ընթացքում վճարվող ընդհանուր մայր գումարը պետք է կազմի վարկի պայմանագրային գումարի առնվազն 15%-ը, տոկոսագումարը վճարվում է ամսական պարբերականությամբ) |
| Ապահովվածություն | Գրավադրվող գույքի նկարագրություն | Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք [6], տրանսպորտային միջոց, հիմնական միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր: |
| | Վարկ/գրավ հարաբերակցություն (որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը) | Վարկ/Գրավ հարաբերակցությունը, ըստ յուրաքանչյուր գրավատեսակի, հաշվարկվում է հետևյալ առավելագույն սահմանաչափերով.<br>1 . անշարժ գույք՝ մինչև 100%: Բիզնես հիփոթեքի վարկատեսակի ներքո ձեռք բերվող անշարժ գույքի/երի գնահատված լիկվիդային և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 100%-ի չափով:<br>2. տրանսպորտային միջոց՝ 50%<br>3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը, սակայն արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում՝ նախագծի արժեքի 100%, առանց ընդհանուր գրավի մեջ մասնաբաժնի սահմանափակման<br>4. ոսկու առարկայազուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80%<br>5. Ամերիաբանկում դրամական միջոցներ և/կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից.<br>-նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 90%<br>-այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 70% |
| | Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը | ՀՀ/ԼՂՀ |
| | Գրավադրվող տրանսպորտային միջոցի տարեթիվը | Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝<br>բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 8 տարի |
| | Գույքի գնահատում | Գրավի առարկայի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից: |
| | Լրացուցիչ ապահովում | Բիզնեսի հիմնադիրների և իրական շահառուների անձնական երաշխավորությունների առկայությունը պարտադիր է, ինչպես նաև որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն: |
| | Գույքի ապահովագրություն | Գրավադրվող անշարժ գույքը ապահովագրվում է միայն այն դեպքում, եթե օգտագործվում/օգտագործվելու է ձեռնարկատիրական գործունեության նպատակով:<br>Գրավադրվող անշարժ գույքի, տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում.<br>1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի/սահմանաչափի չափով,<br>2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի/սահմանաչափի չափով:<br>• Արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում էլեկտրակայանի/ջրատաքացման համակարգերի ապահովագրությունն իրականացվելու է էլեկտրակայանի/ ջրատաքացման համակարգերի տեղադրումից հետո՝ 10 օրյա ժամկետում:<br>Ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները.<br>• Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր:<br>• Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձնեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ<br>• Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ: |
| ատարկման սակագներ[7] | Վարկի պայմանների փոփոխություն | 25,000 ՀՀ դրամ |
| | Անշարժ գույք գրավի առարկայի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխություն) | 20,000 ՀՀ դրամ |
| | Տրանսպորտային միջոցի գրավի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխության համար) | 10,000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| Վարկի տր | Գրավի առարկայի հետ կապված համաձայնությունների, թույլտվությունների/տեղեկանքների տրամադրում | 10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |
| | Վարկի մարման օրվա փոփոխություն | 10,000 ՀՀ դրամ |
| | Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ | 1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, ՀՀ ՃՈ Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի համար սահմանված վճար<br>2. Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական գրանցման վճար իրավասու մարմնում, Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայականի համար սահմանված վճար |
| | Վարկի վաղաժամկետ մարում | Վարկի ժամկետի առաջին 3 տարվա ընթացքում Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վճարվում է ժամկետից շուտ վճարած գումարի 5%-ը:<br>Չի տարածվում "Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի, "Խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար" տրամադրվող վարկերի, "Տոհմային ԽԵԿ-երի ձեռքբերման համար" տրամադրվող վարկերի, "Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով" տրամադրվող վարկերի և Ամերիաբանկում դրամական միջոցներ և/կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով ապահովված վարկերի վրա:<br>Վարկի մասնակի կամ ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում սահմանված վճարը չի գանձվում, եթե տվյալ վարկը վաղաժամկետ մարվում է այդ նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից վարկառուին տրամադրված վարկային միջոցների հաշվին:<br>Մինչև 5մլն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում վաղաժամկետ մարման տուժանք, վճար, տոկոսադրույքի բարձրացում կամ վարկառուի վիճակը վատթարացնող այլ միջոցներ չեն կիրառվում: |
| | Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ | Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:<br>Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0 .13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար: |
| | Կանխավճար արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում | Նվազագույնը՝ 5%, իսկ ապրանքի հետգնման կամ վարկային պայմանագրից բխող պարտավորությունների զիջման վերաբերյալ մատակարարի հետ պայմանագիր ունենալու պարագայում՝ 0% կանխավճար: |
| | Արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում վարկի տրամադրման փուլերը | Վարկը կարող է տրամադրվել փուլային տարբերակով՝ փուլերի մասնաբաժինները սահմանելով ըստ վաճառող կողմ հանդիսացող ընկերությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի, ընդ որում վերջին փուլի գումարը պետք է լինի նվազագույնը վարկի գումարի 20%-ի չափով, որը կտրամադրվի ապահովագրությունը իրականացնելուց հետո: |
| | Հետվճար (cashback) պարունակող աղբյուրներով արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում cashback-ի տնօրինումը | Հետվճար (cashback) պարունակող աղբյուրներով արևային էլեկտրակայանների և ջրատաքացման համակարգերի ձեռքբերման ֆինանսավորման դեպքում ծրագրի կողմից վերադարձվող գումարի նվազագույնը 60%-ը (հաշվի առնելով վերադարձվող գումարի գծով առաջացած հարկերը) ուղղվում է վարկի մարմանը, որի համար վաղաժամկետ մարման վճար չի կիրառվում: Սույն պահանջը պարտադիր չէ, եթե գնորդի (վարկառուի) կողմից վճարվել է նվազագույնը 10% կանխավճար: |

[1] Եթե ի սկզբանե այլ ժամկետ սահմանված չէ վարկային պայմանագրով, վարկի նպատակային օգտագործումը կարող է իրականացվել առավելագույնը 3 ամսվա ընթացում, իսկ փուլային տրամադրվող վարկերի դեպքում՝ յուրաքանչյուր փուլի գումարը տրամադրվում է նախորդ փուլից հետո առավելագույնը 3 ամսվա ընթացքում՝ վերջինիս նպատակայնությունը ստուգելուց հետո:

[2] Դրամական միջոցով և ոսկու առարկայազուրկ մետաղական հաշվով ապահովված վարկերի դեպքում վարկունակության ցուցանիշներ չեն հաշվարկվում, հետևաբար բիզնես վերլուծություն և եկամուտը հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

[3] Կախված հաճախորդի վարկունակությունից, վարկի ժամկետից և վարկ/գրավ հարաբերակցությունից՝ կիրառվում է ավելի բարձր կամ ցածր տոկոսադրույք՝ համաձայն պայմանների անբաժան մաս կազմող հավելված 1-ի:

[4] Նշված էներգաարդյունավետ ներդրումները և նրանց հետ կապված աշխատանքների ընդհանուր արժեքը պետք է կազմի նվազագույնը վարկի գումարի 70%-ը: Մինչև 30% կարող են կազմել այլ ներդրումներ վարկառուի հիմնական միջոցներում: Այս նպատակով վարկերը տրամադրվում են ԳՀՀ "Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար" ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում:

[5] Ռեսուրսների ցանկը, արժեքը և մարժան որոշվում է Ֆինանսական և գործառնական դեպարտամենտի կողմից

[6] Գեոդեզիական չափագրումը պահանջվում է (բացառությամբ պարսպապատ և տնամերձ հողատարածքների), եթե.
- հաճախորդը դիմել է 50 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկի համար և
- հողատարածքի գրավի դիմաց հաշվարկվող վարկային սահմանաչափի մասնաբաժինը ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափում գերազանցում է 30%: Ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափ է համարվում ընդունելի վարկ/գրավ հարաբերակցության սահմաններում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ հաճախորդին հասանելի և տվյալ պահին տրամադրման ենթակա վարկային միջոցների հանրագումարը:

[7] Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայազուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում: Սակագները չեն տարածվում գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի վրա: